**Արձանագրություն N 2**

Դատական դեպարտամենտի կարիքների համար՝ գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան**՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հայկ Սարգսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ,

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ.

**1. <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/34>> ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2019թ.-ի նոյեմբերի 21-ին, ժամը 10:30-ին:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ |
| 2 | «ՍԱՔԻ» ՍՊԸ |
| 3 | «Սմարթլայն» ՍՊԸ |

**2. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնի վերաբերյալ.**

2.1 Սույն ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա.

2.1.1 1-ին չափաբաժնի մասով առկա է սույն ընթացակարգը կազմակերպելու տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/այսուհետ՝ Կարգ/ 21-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> մաս՝ 1-ին չափաբաժնի մասով սահմանված է՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Մեկ միավոր գին (ՀՀ դրամ) | Գնվելիք ապրանքի ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Թուղթ,A4 ֆորմատի | 640 | 20 710 400 |

2.1.2 2-րդ չափաբաժնի մասով առկա չէ սույն ընթացակարգը կազմակերպելու տարվա կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր (գործարք):

**3. Տվյալներ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային ծրարում /այսուհետ՝ մասնակցի կողմից ներկայացված հայտ/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայության մասին.**

**3.1** <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ի, <<ՍԱՔԻ>> ՍՊԸ-ի և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացրած հայտի կազմման՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին.**

4.1. <<ՍԱՔԻ>> ՍՊԸ-ի և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, ուստի վերջիններս գնահատվում են բավարար:

4.2 <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ թերի է լրացված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության << 1) >> կետը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5.Մասնակիցների առաջարկած գներն են՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1.«Սմարթլայն» ՍՊԸ | | | 2.«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ | | | 3.«ՍԱՔԻ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Թուղթ,A4 ֆորմատի | 17798000 | 3559600 | 21357600 | 17798000 | 3559600 | 21357600 | _ | _ | _ |
| 2 | Նամակի ծրար, A5 ձևաչափի | 2223275.00 | 444655 | 2667930 | _ | _ | _ | 1333965 | 266793 | 1600758 |

**Հանձնաժողովը որոշեց.**

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2019թ. նոյեմբերի 25-ին ժամը՝ 10:30-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել համապատասխան մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Տոնականյան

Անդամներ՝ Հայկ Սարգսյան

Էդգար Մելքոնյան

Գրիգոր Գաբրիելյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան